






# ԱՅՈՒՆԵՑԻՆԵՐԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ



**ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆ. «Ես սպեղծում  
եմ իմ արվեստը եւ գնում իմ  
ճանապարհով»**

**U**արյանների կոնպոզիտորական գերդաստանի ննանը հանրապետությունում թերևս չգտնվի: ՀՀ արվեստի վաստակավոր գործիքներ Աշոտ Սարյանի եւ Արամ Սարտոնցի (Սարյան) ստեղծագործություններն ամուր մտել են հայ երաժշտարկվեստի զանձարանը: Այսօր ցանկանում ենք անդրադառնալ Սարյանների երկրորդ սերնին երկայացուցիչ՝ Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիք (2011 թվականից) Արամ Սարյանի կյանքին ու գործին, նանավանդ որ մայիսի 23-ին լրանում է կոնպոզիտորի ծննդյան 65-ամյակը:

Իր գերդաստանի մասին Արամ Սաքյանը պատճում է: «Դորս եւ հորեղորս, կարծում եմ, ներկայացնելու առանձնապես կարիք չկա, բայց ահա բացի նրանցից եւ ինձնից, մեր գերդաստանում չորս կոմպոզիտոր կա: Ամենատարեցն Աշոտ Սաքյանի բուն է, ով պապի անուն-ազգանունն է կրում, այնուհետեւ հորս ավագ եղբոր՝ Պավելի բուն է, ով այժմ Բեյրութի կոնսերվատորիայի պրիվետ է, լողոնարնակ որդիս՝ Դավիթը եւս կոնքնալիստը է, եղբոր՝ Ռութեն Սաքյանի որդին պապի հետքերով է զնացել, այդպիսով մեր գերդաստանում որ կոնչացնուող ենք»:

սուս յոր կոմպոզիտոր նախքան՝  
«Եւկ ի՞նչ եք ժառանգել հո-  
րից», — արցին պատասխանում է.  
«Սարյանները մի հետաքրքրական  
հատկություն ունեն, եղբ ասում ենք  
ժառանգել, ճշնարտությանը մոտ չէ  
ծեւակերպումը: Սարյաններից յու-  
րաքանչյուրն իր ուղիով է գնացել:  
Նրանք մնեմ մյուսին չեն կրկնում:  
Իմ կոնարգիստոր դառնալուն նպաս-  
տել է ընտանեկան մընոլորտը, մեր  
հարկի տակ հորս և հորեղբորս գոր-  
ծնեմեր կոմպօզիտորներ էին հյու-  
րոննապվում, մենք էլ փորձում կհնձ  
նրանց ընդորինակել, գրել իմ-որ  
բան, երթեմն էլ ծեւացնել, թե գրում  
ենք: Յօթ-ութ տարեկան էի, երբ գրե-  
ցի իմ առաջին երգը, որ լուրջ ըն-

համամիութենական մրցույթում Նարինե Դարությունյանի կատարմամբ արժանացել են առաջին մրցանակի: Նույն այդ «Յուրմալյայում» համբաճանաչ կոմպոզիտոր Ռայմոնդ Պաուլը կարծիք է հայտնել, թե Արամ Սարյանի «Սերն անցավ» եւ «Գարնան խոստում» երգերը զարմացրել են իրենց խորությամբ: Եւ արտահայտչականությամբ:

Իր ասելով մատների արանքով է նայում կոչումներին ու մրցանակներին, բայց նաև դրանք հանձնելիս շոյված ու գնահատված է զգում՝ «Խորհրդային Սիոնթրան օրոք մրցանակաբաշխություններ էին անցկացվում, եւ ես չորս անգամ երկորորդ մրցանակ եմ շահել։ Դրանք հաճախ սահմանվում էին կոմերիտմիոնթրան կամ կոմկուսի որեւէ հոբեյանին նվիրված։ Ես էլ այդ մրցանակաբաշխություններին ներկայացնում էի սիրո մասին գրած իմ երգերը, այս ոչ թե թրետեղարձին առնչվող ինչ-որ բան։ Մի անգամ Արմոն Բարանյանին ասացի, թե միշտ երկորորդ մրցանակ եմ շահում։ Անվանի կոմպոզիտոր հարցրեց, թե ինչի մասին եմ գրել, պատասխանել եմ՝ սիրո, նա էլ թե՝ տես՝ ինչին էր նվիրված մրցանակաբաշխությունը, ինչի նաև սիր ես գրել, ինչքան լավ ես գրել, որ սիրո մասին երգի մրցանակի եղածնացել։ Եվ հետո ավելացրեց մի վհատվիր, առաջին մրցանակ էր կոմենասաւ Ալուախ ի Եռավ։»

Վերևու 1979թ. Առն Բաբաջանյանը ասել է. «Ինձ միշտ զարմացրել են նոր սերնդի կոնպաղիտոր Արամ Սաքյամին ատելքագրությունների խորությունը, մեղեդայնությանը և ժամանակը զգալու ունակությունը...»: Քիչ ավելի վաղ՝ 1976-ին ֆրանսիացի դաշնակահար կոնպաղիտոր Նայյա Բուլամնժեն

13

卷之三



## Սիլվա Կապուժիկյանի հետ

տության հեղինակը՝ անվանակարգում արժանացել է «Արտապազո՞» մրցանակին՝ Յ.Պարոնյանի անվան Երաժշտական կոմեդիայի թատրոնի «Մորգանի խնամին» ներկայացման Երաժշտության համար:

Իսկ զեղիանրապես առաջին անգամ մրցանակ ստացել է հեռավորության մեջ՝ 1969-ին Մոսկվայում, Երիտասարդ կոմպոզիտորների համամիութենական ստուգատեսում՝ «Սինֆոնիկ վարիացիաներ» աստեղծագրության համար։ Այնուհետև մրցանակները է ստացել հանրապետական մրցանակաբաշխություններում։ Միայն Երգարվեստում ստացած մրցանակները՝ 13-ն են։ 1976-ին «Առաջին սիրո հեքիաթ իմ», 1985-ին՝ «Վրոյո՞ք հիշում ես», 1991-ին՝ «Չուսու աղոթք» Երգերը ճանաչվել են տարվա լավագույն երգ։ 1986-ին՝ «Սերն անցավ» եւ «Գարնան խոստում» Երգերը «Յուրմալա»

գրել է. «Երիտասարդ կոմպոզիտոր Արամ Սարյանին մեծ ապագա եւ սպասվում, եթե նա կյանքի կոչի հրաժարական առաջնաշահ առաջական մտահղացում ները»: Եվ դրանք հավուր պատշաճ ասված խոսքեր չեին: 1970-80-ական թվականներին Սարյանի մանավանդը ևսորդապի երգերը մեծ ժողովրդականություն և հերթական դարձել են ազգային պատմություն:

դականություն էին վայելում։  
Սաքան կոնճղոսիտորի արվես-  
տի մասին ամբողջական խոր է  
ասել Հայաստանի պետական ֆինանս-  
հարմոնիկ նվազամիջի, ազգա-  
յին օպերայի եւ բալետի թատրոնին  
որիիժոր Ուլրեն Ասատրյանը. «Մեր  
ժամանակի բարձրակարգ եւ բազ-  
մաժանը կոնճղոսիտոր է Արամ Սա-  
քանը։ Նրա դասական (օպերային)՝  
սիմֆոնիկ եւ կամերային), ինչպես  
նաև հանրամաստելի ստեղծա-  
գործությունները, իդրավի, մեծ ժա-  
ռանգություն են հայ երաժշտական  
արվեստի բնագավառում...»։

«Խելք մտավախություն չունի»,  
որ կարող է չհասկացված լինել»,  
— փոքր-ինչ դավադիր հարցին պատասխանում է, որ չի մտածել այդ  
մասին, եւ ննան բան իր համար  
գոյություն չունի՝ հասկացված,  
չհասկացված, եւ հավելում. «Ես  
ստեղծում եմ իմ արվեստը, նվիր-  
ված եմ այդ արվեստին եւ գնում եմ  
իմ ճանապարհով։ Բավարարված եմ  
լինում միայն այն ժամանակ, երբ մի  
լավ գործ եմ ստեղծում, իսկ դա նշա-  
նակում է ինտենսիվ տամնել այն զանգ-  
վածը, որ քեզ հավատում է, սիրում եւ  
գնահատում»:

Հայաստանի հեռուստառադիլութելովնի երաժշտական խմբագիր, Ա.Քարաջանյանի անվան երաժշտական ուսումնարանի երաժշտության տեսության բաժնի վարիչ, Կոնսերվատորիայի ստեղծագործական բաժնի դասախոս, «Հայաստանի հեռուստառադիլ» պետքարքության երաժշտական ծրագրերի Եւ երաժշտական խճերի տնօրինությունում գեղարվեստական դեկան՝ սրանք այն պաշտոններն են, որոնք զբաղեցրել է իր աշխատանքային գործունեության ընթացքում եւ այժմ էլ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր է: Ի դեպ, 1965-66 թվականներին դասավանդել է Գորիսում. «Հայոս ասաց, որ այնտեղ Աշոտ Սարյանի անվան երաժշտական դպրոց կա, պիտի զնաս, բարձրացնես ուսման որակը: Երիտասարդ էի, եռանդ տեղը, բացի այդ այն ժամանակ երիտասարդ կաղղերին գործուղում էին շրջաններ, որ դրանցում էլ երաժշտական կյանքն աշխատմանը»:

«Վարչական աշխատանքը չէ ու

խանգարում ստեղծագործականին» հարցին, պատասխանում է՝ Երբ «Հայաստանի հեռուստառադիտո» պետվաշուրյան երաժշտական ծրագրերի եւ երաժշտական խնդերի տնօրենը ու գեղարվեստական դեկավարն էր, զգացել է, որ ստեղծագործական կյանքը տուժում է, ուստի 1997-ին, Երեք տարի աշխատելուց հետո ըստեց այս ասկուսո՞ն:

Արամ Սահաման ափսոսանքով նշում է, որ իր ստեղծագործությունները հիմնականում արտասահմանում են կատարվում, այստեղ պատվերներ չի ստանում: Մեծ կտավի մի գործ է ստեղծել՝ «1915 թվական», որի պրեմիերան ևու գերսիում է կայացել: Մտադիր է մինչեւ 2015 թվականը՝ հայոց մեծ եղեռնի 100-ամյակը թեմային առնչվող մի ավելի մեծ գործ ստեղծել: Նաև այն համոզնումքն ունի, որ շոու-թիզեսով պիտի զբաղվեն պրոֆեսիոնալները, այլ ոչ թե պրոյուսերական եւ մենեցերական կենտրոնները, որոնք ել կոնպոզիտորական արվեստի այս կամ այն գործի հանդեպ պահանջարկ են ձեւավորում: Եվ ոչ միայն դա: Յիշա արվեստագետի համար դժվարին ժամանակներ են, այդ պատճառով շատ երիտասարդ կոմպոզիտներ չեն գոյացել:

պղոյթորներ դրսում են: Իր աշակերտներից շատերն արտասահմանում են ապրում եւ ստեղծագործում, նրանցից առանձնացնում է Դավիթ Յալաջյանին, ով այժմ Ընթացարիայում է ապրում: Նրա կարծիքով մենք ունենք շատ լավ կոնպղոդտորական դպրոց: Իր սերմոնի կոնպղոդտորներից նշում է Լեւոն Չառչյանին, Աշոտ Զոհրաբյանին, Ռուբեն Սարգսյանին (վերօքու է վախճանվել):

Վերջինը՝ «Սոնի» ֆիլման կոպադ-  
գիտորի ծննդյան 65-ամյակի առթիվ  
որպես Նվեր բողարքեց նրա երգերի  
ձայնասկավառակը։ Աշխարհահ-  
չակ այդ ֆիլման երկրորդ անգամ  
է անդրադառնում հայ ստեղծագոր-  
ծողին։ Զայնասկավառակի բողարկ-  
ման առիթ է հանդիսացել հայտնի  
«Ֆնոնգրաֆ» անսագրում կոնվոկի-  
տորի հոբեյանի առթիվ տպագրված  
հոդվածը։

ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ



## ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

հարուցելու հիմքերի բավարար լինելը եւ դրա համար ժամանակ է պահանջվել) առկա է եղել գործ հարուցելու հիմքը: Սյուրերի նախապատրաստման արդյունքում պարզվել է, որ Ծավ համայնքի ներկայիս եւ նախկին ղեկավարների արարութերում առկա են ՀՅ քրեական օրենսգրքի 315/2-րդ հոդվածով, իսկ «Եներգացանցշն» ԲԲ ընկերության ծառայողների արարություն՝ ՀՅ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին նասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ, որոնցով էլ հարուցվել է քրեական գործը: Ասեմ նաեւ, որ հեկի գլխամասային հանգույցը կառուցվել է ոչ միայն քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողանասերի, այլև նշված շինության կառուցման նպատակով չփառակացված համայնքային սեփականություն հանդիսացող հողանասերի վրա, որով համայնքի իրավունքներին եւ օրինական շահերին էական վճառ է պատճառվել: Ինչ վերաբերում է այն հարցին, թե կողմերի միջև արդեն կա համաձայնություն եւ իմաստ ունե՞՞ր գործ հարուցել, նշեն, որ, կատարված հանցագործության ծանությունից եւ բնույթից եւնելով, քրեական զատավարությունում հետապնդում իրականացվում է հանրային եւ նաևնակիր կարգով: Նշված հանցագործությունների վերաբերյալ գործերը, օրենսդրության համաձայն, համարվում են հանրային հետապնդման գործեր եւ մասնավոր հետապնդման գործեր չեն: Այսպես որ կողմերի միջև առկա համաձայնությունը, քաղաքացիական հարաբերություններում պարտականությունների կատարումը չեն բացառում քրեական գործի հարուցումը, եւ այստեղ նենք գործ ունենք քրեակիրավական ոլորտի հետ: Ներկայունս գործով ընթանում է նախաքննություն:

– Οι δύο ρωνί (δεύτερη θυσία καινοτόμων) ήταν από την περιοχή της Αρκάνγελσκ στην Βόρεια Ευρώπη. Το μέτρο που έγινε για την προστασία της περιοχής από την επίθεση των δύο ρωνών ήταν η απόφαση της Καναδικής κυβερνησίας να απορρίψει την πρόταση της Ρωσίας για την απόσπαση της περιοχής από την Σοβιετική Ένωση. Η πρόταση της Ρωσίας ήταν να αποτελέσει την περιοχή μια ανεξάρτητη χώρα με την ονομασία Καναδία. Το μέτρο της Καναδικής κυβερνησίας ήταν να απορρίψει την πρόταση της Ρωσίας για την απόσπαση της περιοχής από την Σοβιετική Ένωση.

– Οι δύο ρωνί (δεύτερη θυσία καινοτόμων) ήταν από την περιοχή της Αρκάνγελσκ στην Βόρεια Ευρώπη. Το μέτρο που έγινε για την προστασία της περιοχής από την επίθεση των δύο ρωνών ήταν η απόφαση της Καναδικής κυβερνησίας να απορρίψει την πρόταση της Ρωσίας για την απόσπαση της περιοχής από την Σοβιετική Ένωση. Η πρόταση της Ρωσίας ήταν να αποτελέσει την περιοχή μια ανεξάρτητη χώρα με την ονομασία Καναδία. Το μέτρο της Καναδικής κυβερνησίας ήταν να απορρίψει την πρόταση της Ρωσίας για την απόσπαση της περιοχής από την Σοβιετική Ένωση.

— Ես համամիտ եմ Ձեզ հետ, որ  
օրենքի ընտրովի, կոնկրետ հարցե-  
րի հանդեպ երկակի ստանդարտ-

Քրեական գործ հարուցելու: Մեզ ոչ պակաս մեկ այլ հարց նույնպես հետաքրքրում է՝ մի՞թ մեր հայրենին պետության (որտեղ քրիստոնեությունը՝ աշխարհի ամենամարդասիրավան ուսմունքը, պետության արժեհանակարգի հիմքում է դրվագ) օրենսդրությունը մեղմացուցիչ որևէ հանգամանք հաշվի չի առնեմ: Չե՞ որ երիտասարդ կնոշն ազատազրկելով առկախ ենք թողում նրան մանկահասակ երկու երեխայի (մեկը մանկապարտեզ է հաճախում, մյուսը սովորում է դպրոցի 2-րդ դասարանում) դաստիարակության ուսապահայի հարցը, չէ՞ որ բանտում գտնվող կինը չի հասուցի պատճառված վնասը, չէ՞ որ կարելի էր չորստարվա ազատազրկելունը կիրառել պայմանականորեն: Եվ ոչ միայն այդ ամենն անտեսվեց, այլև երկու անգամ փորձ արվեց կնոջ խափանման միջոցը (մինչեւ դատարանի վճռն օրինական ուժի մեջ մտնելը) դարձնել կալանքը (գործով քննիչ՝ Արայիկ Զավարյան, հսկող դատախազ՝ Նայկ Կարապետյան): Բայց շնորհիվ դատավոր Յամլետ Դավթյանի (հարգանք նրան) նախարարնական մարմնի այդ՝ ոչնչով չի հմանապարզված քայլը ձախողվեց, եւ որպես խափանման միջոց մնաց բնակավայրից չի եռանալու մասին ստորագրությունը: Հարց է ծագում մի՞թ հաստիապարտությունը, նախարարնական մարմինն այդ ամենն արել են հանուն Նայաստանի Դամբապատության: Ներդու եռեթ, բայց չենք կարող իմքներս մեր համոզել, որ դա արվել է հանուն մեր պետության: Շատ կուզենայինք, որ գործով քննիչ Արայիկ Զավարյանը, հսկող դատախազ՝ Նայկ Կարապետյանը, դատավոր Նապոլեոն Օհանյանը հանրությանը բացասորություն տային եւ համազեին, որ այդ ամենն արվել է հանուն Նայաստանի Դամբապատության: Եվ ինչ, մարդի դատախազությունը վճռաբեկ դատարանում շարունակելու է պաշտպանել իր սկզբնական դիրքորոշչումը:

– Ես ձեռնպահ կմնամ այդ գործից  
վերաբերյալ մեկնաբանությունները  
անելուց, քանի որ գործը դատական  
փուլում է, եւ ՀՅ օրենսդրության հա-  
մաձայն՝ քրեական գործերով արդա-  
րադատությունն իրականացնում է  
միայն դատարանը։ Առկա է Սյունիքի  
մարզի ընդիանուր իրավասության  
դատարանի դատավիճակը, որը բո-  
ղոքարկվել է ՀՅ քրեական վերաբե-  
նից դատարան, եւ վերջինն առաջին  
ատյանի դատարանի դատավիճա-  
կը թողել է անհնիտություն։ Գայանե-  
նավթյանի կողմից թերվել է վճռա-  
բեկ բրողոք։ Դայսաստանի Դանորապե-  
տության բարձրագույն դատական  
ատյանը, քանի սահմանադրական  
արդարադատության հարցերից, ՀՅ  
վճռաբեկ դատարանն է։ Սպասենք  
վճռաբեկ դատարանի դիրքորոշմա-  
նը։

– Սիսիանում (եւ ոչ միայն) հանրային հնէթորթյուն է ստացել մեկայի գործ եւս: Սիսիանի քաղաքապետարանում կատարված ստուգումների (2012թ. դեկտեմբերի 3-10-ը) արդյունքը Սյունիքի մարզպետարանի կողմից ուղարկվել է մարզի դատախազություն: Երեսուն համայնքում կատարված ստուգումներից միայն մեկի արդյունքն է ուղարկվել դատախազություն... Չենք ուզում այդ առիթով շրջանավորությունակցությունները մերկայացնենք ու քննարկել, բայց կուզենայինք իմանալ դատախազության ձեռնարդ:

**կած քայլերի մասին:**  
– Դաստիարակությունը նարզակ-  
տարանից ստացել է Սիսիանի քա-  
ղաքային համայնքում անցկացված  
վարչական հսկողության արձա-  
նագրությունը, որը վերաբերում է  
քաղաքապետարանի 2011-2012թթ.  
իրականացրած գործառություններին,

մասնավորապես ֆինանսների բնագավառում հայտնաբերված խախտումներին: Դատախազության ցուցումով մարզի քննչական բաժինը նախապատրաստում է նյութեր, որի շրջանակներում նշանակվել է մասնագիտական ստուգում, եւ ներկայում այն ընթանում է: Ստուգման արդյունքներով՝ նյութերի նախապատրաստումն ավարտելուց հետո կտրվի համապատասխան քրեահրավական գնահատական:

– **Քիչ առաջ Դուք անդրադարձաք սյունիքյան իրականությանը եւ արձանագրեցիք, որ մարզի դատախազության արյունավետ գործունեության համար սկզբունքային հժվարություններ եւ աղօքված ոլրուտներ չկան: Այդուհանիքիձ, մեր կյանքում (Այսունիքի մարզի օրինակով) կան բնազավառներ, որոնք, կարծեք, դատախազական հսկողությունից դուրս են: Օրինակ՝ բնապահպանությունը, որը, ի դեպ, Այսունիքի մարզի հիմնախնդիրներից է, բայց ունի փակ ոլրոտի կարգավիճակ (համեմայն դեպս այդպես է երեւում): Լավագույն դեպքում լրատվածիցողները երթեմն-երթեմն հորվածներ են հրապարակում եւ վերջ... Ձեր կարծիքը կուգենայինք իմանալ այդ հարցի:**

– Բնապահպանական խնդիրները սպությամբ ծառացել են ոչ միայն մեր մարզում, այլև հանրապետությունում, որոնց մասին հաճախակի բարձրածայնում են ոչ միայն լրատվամիջոցները, այլև պատկան մարմինները: Դարձի կարեւորությունը հաշվի առնելով՝ մարզի դատախազության 2013թ. 1-ին կիսամյակի աշխատանքի ծրագրով նախատեսվել է ուսումնասկիրություններ կատա-

— Մի հարց եւս, որ ավելի շատ տարակուանանք է առաջացնում: 2008թ. ինչ-որ գործարարի կողմից Սյունիքի մարզի 12 համայնքում 13500 հա հող է վարձակալվել (Սրաշեն, Լեռնաձոր, Ներքին Ղանդ, Ծավ, Ծիկահող, ճակատեն, Տաշտուն, Լիճը, Արփանք, Նօռնաձոր, Շվամիձոր, Լեռնաշեն): Դողերի վարձակալունը ծեւակերպվել է «Գ.Արշակյան», «Լուլիար», «Ղանքաբուրգ» եւ «Թիե սի սի Արմենիա» ընկերությունների կողմից երկրաբանական-հետախուզական աշխատանքներ կատարելու համար: Այդ ընկերությունները, ի վերջո, անքարեխնիդ են գտնվել եւ վարձավաճառ ամբողջապես չեն տվել համայնքներին: Մի քանի տասնյակ մնա դրամի հասնություն այդ պարտքերի վերաբերյալ դատական ասդամնները վճիռներ են կայացրել հօգուտ համայնքների, բայց դատավճիռները չեն կատարվում: Ի՞նչ լուծում է ունենալու անոթալի արտադրություն:

— Նշանակած պատճենը:  
— Նշանակած փաստերի վերաբերյալ տեղեկացված չեմ: Բայց որքան հասկացան հարցից, այն վերաբերում է համայնքների կողմից մի շարք սուբյեկտներին վարձակալությամբ տրված հողատարածքների վարձավճարների դատական կազովբռնագանձնանք, որը համայնքային շահերին է ամբչուն: Դատախազու-

թյան օրենսդրությամբ վերապահված է միայն պետության շահերի պաշտպանության հարցերը, իսկ համայնքային շահերի պաշտպանությունը դատախազության լիազորությունների շրջանակից դուրս է:

— Ստացվել է այնպիս (իս գալիս է խորհրդային ժամանակներից), որ դատախազությունը հանրությունից վեր, ոչ հօգուտ հանրության, ոչ հօգուտ մարդու կառույցի ընկալում ունի հասարակության մի զգալի մասի մոտ: Սյունիքի մարզում եւ

մարզն ընդգրկող շրջաններում էլ, դժբախտաբար, այդին մտածելու թիւ հիմքեր չկամ նախորդ ժամանակներից եկող: Բազմաթիվ դատախազներ ու քննիչներ, նաևս ոստիկանության աշխատակիցներ, իրենց իսկ գոյությամբ ու գործելակերպով տարիներ շարունակ մարդկանց մոտ միայն ատելություն ու հակարանք են առաջացրել մեր պետության հանդեպ: Դրանց մի մասն այսօր էլ համակարգում է, մյուս մասը, բարեբախտաբար, հայտնիվել է լուսանցքում: Բոլոր գնաքերուն այդ մարդիկ հավերժական հուշարձան են այն բանի, թե ինչպես կարեի է չփրիել սեփական երկիրը: Դա նշանակում է, որ իրավապահ համակարգի աշխատակից բարոյական նկարագիրն անչափ կարեւոր է: Դուք նարդի նոր դատախազն եք, Զեզանից շատ բան է կախված նաևս իրավապահ համակարգում կադրերի ընտրության, տեղաբաշխման, դաստիարակման ոլորտում: Ուրեմն եւ հետաքրքիր է իմանալ Զեր պատկերացումներն իրավապահ համակարգի աշխատողի բարոյական, մարդկային, քաղաքացիական, ինտելեկտուա նմանացրի մասին:

— Անցուտ, իրավապահ համակարգի աշխատակցի մասին։

Անցուտ, իրավապահ համակարգի աշխատակցի բարոյական նկարագիրը շատ կարեւոր է։ Աշխատակիցն իր գործեւառուկ եւ վարքագործվ կարող է բարձրացնել կամ իշեցնել տվյալ կառուցի հեղինակությունը հասարակության աչքում։ Ես՝ որպես մարզի դատախազ, իրավասություն չունեմ իրավապահ մյուս ծառայությունների կարդերի ընտրության, տեղաբաշխման եւ դաստիարակման գործում։ Ինչ վերաբերում է դատախազների նկարագրին, իմ պատկերացմամբ, դաստիարակը պեսը է լինի օրինապաշտ, հումանիստ, պարկեցտ, արդարամիտ, զուսպ, անեկեղ, բարեկեիր, սկզբունքային, անելոյնակալ, հաստատակամ։ Իր գործունեությամբ, գործնական, մասնագիտական եւ բարյական հատկանիշներով պետք է նպաստի դատախազության նկատմամբ հասարակության վստահության ծեւակրոնանը, անձնական վարդով հարգանք ու վստահություն ներշնչի դատախազության համակարգի եւ իր անձի նևադնամը։

— Պարո՞ն Նակրյան, շնորհակալութեաւը կալություն հարցազրույցի համար: Անձախտեաւ խոսակցություն ստացվեց կարծեք, մենք գրուցեցինք հաղոցերի շուրջ, որ նախկինում հրապարակային քննարկնան համար թույլատրելի չէին: Ուզում ենք հավատայ, որ տարեկան գոնենք նեկ-երկու անգամ հանրությանը հետաքրքրող նման հարցերի շուրջ գրուցելու հնարավորություն կունենանք, եւ մարդիկ կիմանան, թե մեր կյանքի որ ոլորտում ինչպես է իրականացվում դատախազական հսկողությունը, ինչպես է պահպանվում պետական շահը:

— Ես եւ Եմ շնորհակալ, որ ինապավորությունը ընձեռնեցիր «Սյունյաց երկրի» միջոցով մեր հանրությանը տեղեկացնել իրեն հուզող որոշ հարցերի մասին:

Յարցագրույցը՝  
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ





